— Քրդերը նոյնպէս սիրո՞ւմ են նրան:

— Ոչ միայն սիրում են, այլեւ սաստիկ յարգում են: Չէ՞ որ սէրը սերից առաջ կը գայ: Քուրդն էլ մարդ է, զգացմունք ունի, խօ գազան չէ: Եթէ գազան եւս լինի, սէրը՛, անկեղծ սէրը, նրան մարդ կը դարձնի: Երբ դու գազանին սկսում ես սիրել, փայփայել, երբ սկսում ես նրա քաղցած փորը կերակրել, նա փոքր առ փոքր մոռանում է իր գազանութիւնը, մտերմանում է քեզ հետ եւ սկսում է սիրել քեզ: Դրա համար մեր տէր Յիսուս Քրիստոսը ասում էր՝ «սիրեցէք միմեանց»: Շատ անգամ նա ինձ ասում է. «Այդ ձեր գործն է, տէր հայր, տարածել սէրը. դուք չպիտի զբաղուէք միայն մկրտութիւն, պսակ, թաղում կատարելով»: Ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ է, այդ մեր գործն է սիրոյ տարածելը: Բայց մենք ոչինչ չսովորեցինք. մենք քահանայ դարձանք. առանց քահանայի սրբազան պաշտօնի արժանաւորութիւնները ունենալու: Եւ մեզանից չպահանջեցին այդ արժանապատոութիւնները: Մեզանից պահանջեցին միայն վարձը, որով ամէն մի տգէտ քահանայ է դառնում: Երբեմն նա ինձ գրքեր է տալիս, կարդում եմ. իմ աչքերը նոր են բացւում, եւ ես նոր եմ հասկանում, թէ որքան անպատրաստ եմ եղել: Ինչե՛ր չէր կարող անել քահանան, մանաւանդ շինական քահանան: Այն բոլոր գործերը, որ նա է կատարում, հէնց քահանայի գործն է: Միթէ՞ քահանան չէր կարող կրթել գիւղացի մանուկներին. միթէ՞ քահանան չէր կարող ծանօթացնել գիւղացուն երկրագործական նոր ձեւերի հետ. միթէ՞ քահանան չէր կարող այցելել հիւանդներին եւ նրանց ցաւերին դարման տանել: Միթէ՞ առաքեալները նոյնպէս հիւանդների մօտ չէին գնում եւ բժշկութիւն չէին անում: Որքա՞ն գործեր կան, որ կարող էր կատարել լաւ պատրաստուած քահանան: Բայց մենք ոչինչ չսովորեցինք եւ քահանայի ծանր պաշտօնը յանձն առինք:

Լսելի եղաւ մի խուլ շաչիւն, շառաչիւն: Տէր հօր խօսակցութիւնը ընդհատուեցաւ: Ես սոսկացի:

— Այդ շղթայի ձայնն է, — հանգստացրեց ինձ տէր հայրը, ժպտալով:

— Ի՞նչ շղթայ:

— Նայեցէ՛ք:

Ես նայեցի դէպի տէր հօր ցոյց տուած կողմը: Այնտեղ պառկած էր նրա որդին եւ, մի տարօրինակ դատապարտեալի նման, նրա ոտքերից մէկը կապած էր բաւական հաստ շղթայի ծայրին, որի միւս ծայրը անց էր կացրած պատի միջով. ո՞ւր էր տարած, չէր երեւում: Քնի մէջ նա շարժեց ոտը եւ շղթայի շաչիւնը աղմուկ բարձրացրեց:

— Այդ ի՞նչ բան է, — հարցրի զարմանալով: